

ՆԱԻԹԱՅԵՐՁԱՆԻ ԲԱՆԻՈՐՆԵՐԸ

ԳԱՐԵՎԻՆ ԽԸՆՎԱԿՆԵԼՆԻ

(Շարունակութիւն ¹⁾)

* * *

Բացի յիշւած առողջապահական սրակատութիւններից, կաչ և մի ուրիշ դաս պակասութիւնների, որ կրկին բանւորի առողջութեանն է վերաբերում: Դրանք «վնասումներ» կոչւածներն են:

Վնասումներն այնպիսի շշափելի և տեսանելի երևոյթներ են, որ չտեսնելու համար պէտք է բոլորովին կոյը լինել: Խնչպէս չնշմարել, երբ մի մարդու ոսն է կոտրում, միւսի թեւն է վնասում, երրորդի երեսն է այլում, չորրորդի մասն է կորում, հինգերորդը նաւթի մէջ է խեղդում, վեցերորդը մազութի մէջ այրում և այլն և այլն: Ի հարկէ չնշմարել չտեսնել անկարելի է: Դրանք արդէն այնպիսի երևոյթներ են, որոնց նոյն իսկ օրէնքը :ի կարողացել աչքից թողնել: Կան որոշ յօդւածներ, որոնք վնասման պատճառ եղածին, պատժում են: Իսկ առաջին տեսակի դանգաղ, սպանող պայմաններն այնքան ծանր, այնքան անզգալի կերպով են առաջ առաջում իրանց գործը, որ նշմարելը և ձեռք մեկնելը պահանջում է աւելի ուշադրութիւն դէպի բանւորը:

Վնասումները առաջանում են երկու պատճառից. առաջին և ամենատարածւած պատճառն է այն, որ մեքենաները և միւս շրջա-

¹⁾Տես «Մուրա» 1892 թ. №№ 10, 11, 12 և 1893 թ. № 3, 4 և 10:

պատող առարկաները հարկաւոր կարգի, հարկաւոր պատրաստութեան և զգուշութեան չեն ենթարկում: Արա պատճառն էլ ամենքին յայտնի արծաթամափրութիւնն է: Տգէտ դրամատէրերը կարծում են, թէ մի քանի մանէթ մի վիճակի, մի պարանի կամ մի ուրիշ բանի համար որ խնայեն, մեծ բան կանեն: Կեռ այնքան զարգացում, այնքան խելք է կայ մեր դրամատէրերի մէջ, որ կարողանան ըմբռնել մի ամենահասարակ ձշմարտութիւն: որքան բանող մարդու պայմանները—թէ ապրուստի, թէ աշխատութեան—լաւ լինեն, այնքան նրա աշխատանքն աւելի արդիւնաւատ կը լինի: Տգէտ գիւղացին այդ ձշմարտութիւնը վաղուց է հասկացել. նա իր կովերին շատ լաւ է պահում, որ շատ կաթ տան: Պէտք է աւելի արդարասէր լինել. երբեմն դրամատիրոջ մեղքը թեթևանում է, որովհետեւ կառավարիների անփորձութիւնից և անհոգութիւնից էլ կարող են առաջանալ շատ վնասումներ: Բայց կրկին մեղքը դրամ տիրոջն է, եթէ ուղենանք դէպքի վրայ փաստացի նայել. ինչու մի վարձում «լաւ» կառավարի: որովհետեւ փողն է խնայում: Երկրորդ և քիչ պատահող պատճառն է բանուորի սեփական անհոգութիւնը: Առաջին դէպքում օրէնքը մեղաւոր է ճանաչում հաւատարմատար կառավարին կամ, եթէ կառավարիչ չկայ, դրամատիրոջը և «պատիժ» նշանակում, իսկ երկրորդ դէպքում բանուորին և այդ դէպքում՝ անհետեանք թողնում զործը:

Կառավարութեան ժամանակ, ի հարկէ, միշտ յաղթողը լինում է դրամատէրը. «Նզորի առաջ անմեղ արդարն էլ է մեղաւոր»: Խեղճ բանուորը, որ առանց այն էլ զրկւած է իր միոքը կանոնաւոր կերպով յայտնելու լնդունակութիւնից, պէտք է դատարանում ինքն իրան պաշտպանի, պատասխանելով դրամատիրոջ կողմից գործը պաշտպանող «երդեալ հաւատարմատարներին»: Բանուոր, և բարձրագոյն կրթութիւն ստացած իրաւաբան—ինչ հաւատար ոյժեր են դատ պաշտպանելու գործում: Եւ այդ իրաւաբաններից շատերը, առանց խղճահարւելու, մեղքը զցում են բանուորների վրայ, որոնք գուցէ, առանց այդ էլ, ահազին վնասներ են տեսել:

1891 թւի օգոստոսի վերջերին էր, որ կառավարչի անհոգութեան և անխղճութեան շնորհով էստլեանդցիների նաւթագործարանում 6—7 սաժէն խորութեան լայն ջրհորի մէջ լնկան և խեղճ-

ւեցան երկու առողջ բանտօրներ, որոնց ստիպել էին մտնել նաւթային գաղով և զօրեղ ածխաթթւով լցւած այդ հորը։ Մտնելը և ուշագնաց լինելն ու ահազին բարձրութիւնից մինչեւ ջուրն ընկելը 3—5 րոպէ հազիւ տևեց։ Ոչ ոք չէր ուզում հորը մտնել նոյն իսկ 10 մանէթի համար, որ գոնէ այդ ողորմելիների դիակները հանեն։ Երկու ժամ մէջը մնալուց յետոց հազիւ հանւեցան, երբ արդէն ամեն ինչ վերջացել էր։ Նթէ շուտ օգնութիւն հասցնէին, անշուշտ կազառեին։ Եւ այդ գործարանի հրէայ կառավարին ազառւեց օրէնքից, արդարացաւ, որովհետեւ «բանտօրներն էին մեղաւոր, սեփական անհոգութեան պատճառով ուշագնաց եղան»։

Նոյն թւի աշնանն էր, որ նորէլ եղբացների ձուլարանում հալած շուգունը կաթսայից դուրս է թուչում և այրում մի քանի բանտօրների ամբողջ երեսները։

Կրկին նոյն աշնանն էր, որ նաւթաղաշտում՝ նաւթի ամբարի մէջ խեղդւել, սեացել էր մի բանտօր։

1892 թւի կարծեմ յունարին էր, որ բանտարկւեցան երկու աշքի ընկնող փիրմաների տէրեր—Արավելեան և Արէշեան (?), որոնց անզգուշութեան պատճառով մեռան 3 բանտօրներ։

Նոյն թւի աշնանն էր, որ կաթսայի շոգին խփեց խաշեց 2 բանտօրների Սև-Քաղաքում։

Ափսոս, որ չկան ճիշտ տեղեկութիւններ մանր ու խոշոր վնասումների և զրանց վերաբերուած դատավարութիւնների մասին։ Յայտնի է միայն այսքանը, որ 1891 թւի ընթացքում դատի են ենթարկւած 20 խոշոր դէպքեր, որոնցից 10-ը վերջացել է անմիջական մահով, իսկ միւս 10-ը ծանր խեղաթիւրութիւններով ու վնասներով։ Իսկ թէ որքան են հասարակ վնասումների, ուռոցների, կոտրւածքների, վէրքերի թիւը, որոնց համար բանտօրը զրկուում է աշխատելու ընդունակութիւնից ժամանակաւորապէս, որքան է անյաջտացածների թիւը, որոնց վրայ ոչ ոք ուշք էլ չի դարձնում և այլն և այլն—այդ միայն Աստած գիտէ։

Ի՞նչ ասաիծանի անհոգութիւն դրամատէրերի կողմից։ ամբողջ նաւթաղաշտը մինչեւ օրս միայն երկու կանոնաւոր ճանապարհներ ունի, որոնցով կարելի է ասլահով անցնել, իսկ միւս բոլոր բազմաթիւ ճանապարհները ներկայացնում են խսկական դժոխային շա-

ւիղներ: Այստեղ պէտք է անդադար պատահող խողովակների ցանցերի վրայով թռչես, այնաևզ-ջուրը չընկնելու, նաւթակուլու չինելու համար պէտք է խողովակների վրայով լարախաղացի նման անցնես, երրորդ տեղ պէտք է ահագին շրջան անես, որ ամեն մի քայլափոխի վրայ դժնւած փոսերից մէկը : Դլորես: Ի՞նչ կայ աւելի հեշտ քան երևակայել, որ ոսդ սլկվածում է նաւթաշաղախ կաւի վրայով և ընկնում ես նաւթամբարը: Եւ որքան խեղճ, թշւառ բանւորներ խեղուել, անյալացել են այդ ամբարների մէջ: Հասղա Աւագագի մաղութի ամբարները. Կթէ բանւորի ոսը սայլթաքեց և ընկաւ՝ կամ կայրուի, եթէ մաղութը կաթսաներից նոր է բաց թռղած, կամ կը խեղդուի, եթէ հեղուկն արդէն սառել է: Թէև այդ ամբարները շինւում են զործարանի խուլ մասերում և ցածր պատերով շրջապառում, բայց էլի քիչ չեն դրանց զարհութելի զոհերը:

Դրամատէրերի տղիառութիւնը և անհոգութիւնը այն աստիճանի է համանում, որ երկրագնդի համարեա կէս մասը լուսաւորող նաւթաղաշը դիշերներն ընկնում է խոր խաւարի մէջ: Այստեղ և այնտեղ մթութեան մէջ փայլվիում են մանրիկ էլեքտրական ձրագներ, որոնք հազիւ մի քանի քայլ տեղ կարողանում են լուսաւորել և այն էլ զրւած են լինում միայն այն տեղերում, որոնք ծառայում են աղազի անմիջական շահագործութեանը (էկսպլուատացիա), այդ տեղերից մի քանի քայլ այն կողմ գնացիք, կը շւարիք, թէ ուր գնաք, ի՞նչ անէք, որ ձեզ վասնդի չինթարկէք: Նաւթաշաղախ, սայլթաքող, նեղ ճանապարհները և նրանց շրջակացքում ցրւած բազմաթիւ փոսերն, ասուներն ու նաւթամբարները շինւած են յատկապէս, կարծես, զիշերով մարդիկ որսալու համար:

Պէտք է աշքի աւած ունենալ, որ արգելւած է նաւթահորերի մօտերը նաւթի կամ մոմի լաստեր ման ածել. անցնողը միայն պէտք է բազդի վրայ յոյս դնի: Այդ է պատճառը, որ, մութն ընկնելուն պէս, մշակ թէ ինտելիգէնս բանւորները փակւում են իրանց տներում և, առաջինները, խաղով, տխուր երգերով ու սաղով և հէքիաթներով անցկացնում մամանակը, իսկ երկրորդները — կամ բամբասելով, կամ հարրելով, կամ սենեակից սենեակ աննպատակ թափառելով: Նարժում, մաքերի փոխանակութիւն, ողեռութիւն — Ասուած տայց: Իսկ իրար պատահած ժամանակ նոյն զոյլը, նոյն

մղիչները, նոյն զգւելի նաւթն ու շատրւանը... ոչինչ գաղափարական, ոչինչ բարձր, կոպէկից դուրս...

Հապա հրդեհը. մի՞թէ դա փոքր վնասումներ է առաջացնում Աւգում էք դժոխքի մասին գաղափար կազմել, տեսէք Բալախանու կամ Սև-Քաղաքի մի մեծ հրդեհը. չորս կողմ փայտեալ իրեր, նաւթի ամբարներ ու պահեստներ, նոյն իսկ գետինը նաւթով լողացւած — ի՞նչպէս կը վառւի: Խակ եթէ շատրւան խփած ժամանակն է հրդեհը բռնկում, ամբողջ նաւթախինը կրակ է դառնում և հսկայական ծառի նման այրում ու կրակէ անձրև թափում: Հանգցնել անկարելի է. պիտի այրուի մինչեւ վերջը: Այդ գէպում էլ անվնաս չի մնում խեղճ բանւորը. խանձւել, այրել, ոտը, ձեռը կոտրել և այլն և այլն:

Վնասումների մասին բանւորը դիմում է օրէնքին, գաստարանին, երբ այդ վնասումներն զգալի են, խոշոր են. իսկ մուր դիմէ խեղճը, երբ վնասումները մանր են, երբ կառավարինները, այդ բանւորների «խարազանները», ասօրինի կերպով տանջանքների են ենթարկում առանց այն էլ զրկւած բանւորին: Մոսկայի, Վարշաւյի շրջանի բանւորը կարող է դիմել շրջանի գործարանական տեսչին և նոյն իսկ վերատեսչին — իսկ մե՞րն ում դիմէ, ի՞նչ անէ:

*
* *

Խնչպէս արդէն մի անդամ ասւած է, նաւթաշրջանի բոլոր բանւորներն եկած են դիւղերից և քաղաքներից: Գիւղական բանւորները բերել են իրանց հետ բոլոր գիւղական նախապաշարմունքները և տղիսութիւնը, գիւղական մաքրութեան, պարզութեան ու բարոյական ամբողջութեան հետ միասին. իսկ քաղաքներից եկածներն արդէն կրում են իրանց մէջ փշանալու բոլոր սաղմերը, ունենալով դրանց հետ և շատ չնշին թւով լաւ, դրական կողմեր ևս Վերջիններիս պակասորդը շուտով լրացնում է նաւթաշրջանը, մեծ քաղաքներին յատուկ ճարպկութեամբ: Խակ գիւղականների ամբողջ, դեռ ձեռք չկպած, բնաւորութիւնը արագութեամբ սկսում է լուծել, ոչնչանալ, ընդունելով մեծ քաղաքներին յատուկ բոլոր պակասութիւններն ու առաւելութիւնները: Բայց որքան քիչ են այդ առաւելութիւնները, համեմատելով իւրացրած անբարոյակա-

նութեան հետո Անվիճելի է, որ գիւղական պանդուխտ կամ գաղթական բանորը քաղաքում զարգանում է մտաւորապէս. բոլոր մեքենաները, գործարանները, էլէքտրական լուսաւորութիւնը, կուլտուրայի բոլոր արդիւնքները, մեծ քաղաքի նոյն իսկ աները, գեռչհաշւած մարդկանց շփումից առաջացած զարդացումը, առաջ են քշում, բաց անում մարդու մտսւոր կարողութիւնները: Այդ ճանապարհով ձեռք բերած մաքի զարդացումը միշտ դէպի անբարոյականութիւն է տանում անհատին. ոչնչանում են ամեն աեսակ բարոյական հիմքեր, կորչում են նախասպաշարմունքները և գես չեն արւում բարոյական հիմքեր: Իսկ այդ բարոյական դատարկութիւնը, այդ ամեն տեսակ սրբութիւնների ոչնչացումը միշտ աւելի զգելի հետևանքներ է տւել, քան նոյն իսկ ճնախապաշարմունքները: Պէտք է քանդել ամեն տեսակ նախասպաշարմունքներ, խախտել ամեն տեսակ հեղինակութիւններ, բաց միշտ. դրա հետ միասին պէտք է առաջ քշել գրականը, բարոյական հաստատուն հիմքերը, որոնք արդէն ընդունւած, ճանաչւած են լոգիկայից: Առաջապիմութեան հաստատուն և անվիաս ձեւը միշտ եզել է այն, որ կազմակերպել է նոր համոզումներ, նոր հայեցակէտեր, իսկ այդ նորերն առանց մեծ նեղութեան իրանք են քանդել, դուրս քշել հներին:

Ուսւ գրականութիւնը, մասամբ և հայկականը, տւել են բաղմաթիւ կենդանի տիպեր այդ բարոյական դատարկութեան: Բաւական է յիշել այդ տիպերից ամենախիստերը—Նիկիտան—և իր մայրը—Մատրիոնան (Լ. Տոլետոյ—„Վաստի տիմ“), Արդարիոն Սերգէիչը („Հա զարածութեանութեան“—роман՝ ոչ ճաշճարութեան ժենտինի—Շենքինի): բաւական է յիշել մեր ամիկիտան Սաքօն (Պաօշեանց—«Հացի խնդիր»), բաւական է թերթել Գ. Ուսպէնսկու և Շէպրինի առաջին պատահած յօդւածը, և մեզ համար պարզ կը լինի, թէ ի՞նչ է յաջորդում գիւղական բնաւորութեան ամբողջութեան (լֆալութեան) քայլքայմանը:

Գալիս են անմեղ՝ աշխարհ, մարդիկ չտեսած գիւղացիները և մի քանի ամիսներից կամ տարուց յետոյ նրանց բնաւորութիւնը լուծում և վարակում է: Առաջ գոնէ նա վախեն ու մ էր սըրբերից, դժոխքի պատիժներից, թասիրից ամաչում էր, ուրիշների

կարծիքին նշանակութիւն էր տալիս, մի խօսքով ունէր մի որոշ տեսակեա, որով քննում էր բոլոր կենսական երևոյթները և իր սեփական «եւս-ը», իսկ այժմ նա կորցրել է իր չենման կէտը. չպիաէ ինչպէս նացէ, ինչով չափէ լաւ ու վատը: Տւէք, շուառվ տէք նորան այդ բարոյական արշինը, այդ բարոյական հիմքերն ու աետեսակէտը, որ նա չառաջացնի բարոյական «անցողական» դրութեան կեղաերը: Գուցէ ասեն, որ ազգ «անցողական», դատարկ գրութիւնն անհրաժեշտ է, աւանց դրան հետեւել ասաինանն օդի մէջ կախած կը մնայ: Ո՛չ, պարոններ, հարկաւոր նախապատրաստութիւն և գարգացում ունեցող առաջնորդները կարող են այդ դատարկութիւնը չստեղծել. հարկաւոր է միան «հարասնիքի յարմար հագուստով հարսնետուն մտնել»:

Բանորի բարոյական աշխարհն ամբողջապէս բոնւած է միայն վողով, որի ձևոք բերելու համար նա ամեն տեսակ միջոցներ գործ կը դնի, եթէ կարողանայ: Երբ արդէն այդ «կարողանալը» նրա համար հշշանում է, այլ ևս մնաք բարով գիւղացիական սըրութիւններ... նա միշտ ձգտում է աղայ դառնալ, կոկիկ հաղնել, շատ փող գիղել. մի խօսքով—նա ճաշակում է դրամագլխի բոլոր թովիչ կողմերը: Նրա իդէալն է աւելի շատ յետին «չարչի-աղան», քան ամենաբարոյական մարդիկը, որոնց նա «խե» է անւանում:

Այդ գրութեան հասնելու համար շատ երկար ժամանակ չէ հարկաւոր բաւական է կէս կամ մի տարի, և արդէն ամեն ինչ պատրաստ է. ձգտումները փոխւել, բարոյականը քայլքայել, սրբութիւնները կորցրել բանց նշանակութիւնը: Այդ գրութեան մէջ են բանորների բոլոր քաղաքացի մասը և գիւղականներից վաղուց եկածները, այդ ճանապարհի վրայ են վերջիններիս նոր եկած խմբերը:

Ամեն բան նապատում է քայլքայելուն—ոչինչ չկայ, որ գիմազի, որ յետ պահէ. ոչ մի հասարակական հիմնարկութիւն, բացի «հանրաբառչելի զինետնից», քաղաքակրթող կաբակներից, կանանց ոչ մի հասարակութիւն, բացի բազմաթիւ ոռւս ու գերմանացի լւացարաբներից, աղախիններից, պոռնիկ կանանցից և զինետների ու խանութների «էժան սիրաբանութիւններ» անող առեւրական կանանցից: Այս, շնոր վտանգաւոր և հրապուրիչ է լնտանիքից զրկւած, ինոչ հասարակութիւնից բաժանւած բանորի համար

այդ ըլնկած կանանց» դասակարգը: Ի՞նչ վեներական հիւանդութիւններ ասես չեն տարածւած նաւթաշրջանի բոլոր դասակարգերի մէջ, չնորհիւ այդ դասակարգի կանանց, չնորհիւ իրերի ներկայ դրութեան: Որքան կոպտանում է, վայրենանում է տղամարդը, երբ բոլորովին կտրում է կանանց հասարակութիւնից: Պակասում է նաւթաշրջանի բոլոր դասակարգի ծառայողների համար կնոջ փափկացնող և նոյն իսկ ողի բարձրացնող ազդեցութիւնը:

Վերջացնում է երեկոյեան գործը կամ տօն օր է, գործ չկայ: Առաջ գնաց, ինչ անի բանւորը: Նոր եկածները միսիթարութիւն են գանում հեքիաթների, երգի և հայրենական թարմ ցիշողութիւնների մէջ. իսկ հները: Տնեն գնան: Տունը կեղտոտ, խոնաւ, մութ, փոքրիկ. ուինչ չի քաշում ձգում նրան դէպի տուն: Հասարակական ոչ մի զրօսավայր, ոչ մի զրազման, մարդավայել տեղ չկաց, որ գնաց, ֆիզիքապէս և բարոյապէս տանջւած մարմնին հանգստութիւն տաց, թարմացնի: Միւս կողմից ճնշում է, ճնշում աղքատութիւնը, մաշում է թախիծը, կարօտը, հալածում է այն միաքը, որ ինքն էլ ուրիշների նման մարդ է, բայց դատապարտւած է տանջւելու, շարչարւելու: Սարսափելի հոգեկան դրութիւն... Մարմնի յոգնածութիւնն աւելի անտանելի է դարձնում խեղծի մութ կերպով զգացած հալածող մոքերը: Նա չի կարող սկարզ հաշիւ տալ իրան, թէ ինչ է ուզում, բայց դրութիւնը պարզ է: Ո՞ր ժամանակ ամբոխը կարողացել է գիտակցօրէն վերաբերւել իր դրութեանը: Եթէ այդ գիտակցութիւնը լինէր, էլ ի՞նչ կարող էր արգելել ամբողջութեանը դուրս գալու այդ դրութիւնից: Նաւթաշրջանի ամբոխը, բանւոր դասակարգն էլ է գտնում իր դվիսի ճարը, բայց այդ միջոցն արդէն վաղուցւայ յայտնի միջոցն է և միակը—նա զնում է միակ փրկատեղին—դինետունը: Նա խմում է, հարբում է, կարծես զւարճանում է, բայց այդ ողորմելի զւարճութիւնը զւարճութիւն չէ, այլ փորձ՝ ժամանակաւորապէս խեղիւլու դրուխ բարձրացրած խուլ, ներքին անորոշ բողոքի և անբաւականութեան ձայնը: Քող քսան տարի 1. Տոլստոյը բողոքի ծխախոտի և խմիչքների դէմ և թող դրանից էլ աւելի Աղ. Դիւման բարեհաճի մի քանի յօդւածներ դրել դրանց օգտակարութիւնը ապացուցանելու համար— այդ բոլորը կը մնան միայն իրեւ նշան քարողների ներքին աշ-

խարհի, զգացմունքների թափառութերի, որոնք ելք են վնարում, միջոց են մոտածում հասարակական ցաւերի դէմ, և իրերի ներկայ դրութեան ժամանակ ստիպւած են լինում կուել միայն հետեանք-ների դէմ, մատնանիշ անել միայն որոշ պայմանների անխուսափելի հետեանքները, փոխանակ աշխատելու աւելի արմատական միջոցների դիմելու, փոխանակ դրանց առաջացնող պայմանները կործանելու։ Ամբոխի կեանքը միշտ եղել է կոյր և խուլ այդ տեսակ քարոզների համար։ Ամբոխը միշտ կազմել է և կազմում է աշխարհի ամենադրական և նիւթապաշտ (մատերիալիստ) տարրը, երբ գործը վերաբերել է նրա երկարժամանակեաց սովորութիւններին։ զժւար է նրան յետ կանգնեցնել որ և է բանից կամ մի նոր բան անել տալ, մինչեւ գործով ցոյց չտաք նրան դրա օգուտալ։

Ի՞նչ անի հասարակ բանւորը, երբ նրա ստացած 50 կոպէկը բաւական չէ ապրելու համար, ի՞նչով է մեղաւոր նա, որ ինքն էլ իրեւ մարդ ունի այս վերջինիս յատուկ բոլոր պահանջները. նա էլ ուզում է զւարճանալ, նա էլ է ուզում փոքր ինչ բարձրանալ ամենօրեաց հոգսերից, ուզում է գոնէ մոռացութեան տալ այդ մաշող դարդերը։ Այդ ամենը նա գտնում է իր ընկերական շրջանում, մի քանի շեշ սպիտակ հեղուկն առաջներին։ Եւ խում է նա։ Խում է, որովհետեւ այդ խմելը նրան տալիս է մի քանի երջանիկ, հազսերից, ձնշող կարիքներից ազատ վայրկեաններ։ Երբ զլուխն սկսում է տաքանալ, ջղերը դրգուել, նա իրան զգում է բարձրութեան դազաթնակէտին։ Նրան թւում է թէ ինչ ուզենայ կարող է անել այդ բոպէին։ Զղերի գրգուման յաջորդում է ընդհանուր թուլութիւն և եթէ հերոսը բազդ ունեցաւ՝ մի անկիւն կը զանի, հանգիստ կը քնի, իսկ հակառակ դէսկըում—կընկնի փողցները, ամեն բոպէ պատրաստ լինելով ընկնել ձիաքարշի, շոգեկառքի կամ բազմաթիւ կառքերի տակ։ Պատէսպատ կողելով, երերալով ինքն իրան հետ խօսելով, գնում է առաջ ողբրմելին և շատ յանախ զւարծութիւն պատճառում դրան շրջապատող անսիրտ հասարակութեանը։ Քիչ չի պատահել ինձ լսել այդ հարրածների բարձրացն բողոքը. նրանք բողոքում են Աստծու դէմ, որ իրանց այդ օրին է դցել, բողոքում են կառավարչի դէմ, որ այդ օրերը զրկել է տեղից կամ տուգանք է առել, վերջապէս բողոքում են, իրանք

էլ չիմանալով ինչի, ում դէմ. դա խուլ կերպով զգացւող մարդկային, իսկական մարդավայել զգացմունքների բողոքն է, որոնք եղել են բանորի մէջ ամենաստոր աստիճանի, որովհետեւ երկար, մշտական ֆիզիքական աշխարհքը բժացնում, մի տեսակ անասնացնում է մարդուն, որովհետեւ շրջապատողների—դրամատէրերի և նրանց արբանեակների—յարաբերութիւնը միացնող, խեղջող է ամեն մի մարդավայել, մաքուր զգացմունքի: Աղան ու իր հաւատարիմ ծառաները սպահանջում են նրանից քծնել, կեղծաւորել, շողոքորթել, անպայման այց՝ ասել ամեն մի բանի: Այն աստիճանի է հասել այդ բարոյական ճնշումը, որ բանւորը մի բոլորովին օտար մարդու մօտ ևս նոյն դիրքն է բռնում, ինչ աղայի մօտ. այսինքն արդէն սոսրանալը, անասնական դիրք բռնելը սովորութիւն է դառել մեծապատիւ աղաների բարեհաճ ցանկութիւնով:

Բանւորին սորկացնելու գործում աւելի մեծ դեր են խաղում կառավարիչներն ու միւս ինտիլիդէնս աշխատաւորները, քան նոյն իսկ դրամատէրը, որ երբեմն ամիսներով չի տեսնում նաւթահանքի կամ գործարանների երեսը: Այդ աշխատաւորի սպահանջը ճիշտ ընկնում է աղայի սպահանջների հետ, նրանց ձգուումները նոյն են. դարձնել բանւորին մի անշունչ գործիք, որին ինչ հրամայես, ինչ պէս և ինչ ժամանակ ասես, այնպէս և վայրինական արագութիւնով կատարի, մեռցնել ամեն տեսակ անհատական մարդկային ձրգառումներ, որ բանւորը ոչ մի խօսք, ոչ մի բան չկարողանայ ասել հակառակ իրանց բարեհաճ տնօրէնութեան: Երբեմն այդ ինտելիգենտ աշխատաւորներն աւելի աղայական ենու իրանց ձգուումներով, քան նոյն իսկ դրամատէր բուրժուաները:

Ի՞նչ կայ աւելի հեշտ, քան կոորել մի նիւթական խիստ կարիք ունեցող և ոչ մի որոշ և հիմնաւոր բարոյական հասաստ կերպարանք չունեցող տգէտ անհատի: Բանւորին շրջապատողները բոլորն էլ սիստեմատիքաբար ձգուում են նոյն կէտին, կարծես լումանկավարժներ լինեն: Ի՞նչպէս կարող է զիմանալ խեղճ բանւորն այդքան ուժին, այդքան զօրեղ ճնշման: Եւ նա տեղի է տալիս, լնկնում է, կոտրում, դասնում նրանց ու զած գործիքը: Այդ տեսակի գործիքներ են նաւթաշըջանի համարեամ բոլոր ծառայողները իրանցից բարձրների մօտ: Աերջին տարիներս, երբ, հայ ուսուցա-

կան ասպարէզից զզւելով, շատերը թողնում գալիս էին Բագու գործ զանելու, դրամակերերից շատերը ամսայանի կերպով խուսափում էին նրանց տեղ տալուց, չնայելով մարդու կարիք էր լինում, որովհետեւ ուսուցիչ եղած մարդը էլի քչից-շատից հասկանում է «իրաւունք և պարտականութիւն» բառերը: Դրամատէրերն ու կառավարիչները լաւ են համարում մի տղէտի գնել իրանց գործի վրայ, քան մի հասկացողի: Խայց այդ դրամագլխի կրծող ոյժն այնքան զօրեղ է, որ նոյն իսկ ամենալաւ երիտասարդների բարոյական աշխարհը մի-երկու տարուց յետոց սկսում է քայլքայւելը ոչնչանալ, տեղի տալով ընդհանուրի միաձայն պահանջներին: Նաւթաշրջանում ծառայողի աչքում կապիտան սկսում է հրեշտակը արժէք ստանալ, զր ո հետ միասին բարձրանում է և կապիտալիսոր, աղան:

(Վերջը լաջորդ համարում)